№ 162 Սեպտեմբերի 1 (13) 1881 Սեպտեմբերի 1 (13) № 162

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուր է այն ձայնը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Ամերիկա։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՈՒՐ Է ԱՅՆ ՁԱՅՆԸ

Շատ տեղերից ստանում ենք նամակներ, որոնց մէջ մեզ առաջարկում են հետեւեալ հարցը։ „Արդեօք ե՞րբ կը յայտնէ „Մշակի“ խմբագրութիւնը իր առաջնորդող յօդուածով մի վճռական խօսք այն տարաձայնութիւնների, անհամաձայնութիւնների, երկպառակութեան, կռիւների ու յարձակումների մասին, որոնք տեղի են ունենում Կ. Պոլսի Միացեալ Ընկերութեան առիթով, ե՞րբ պէտք է „Մշակը“ ասի իր վերջին խօսքը, որպէս զի մենք էլ իմանանք, ինչպէս վերաբերվենք դէպի յիշեալ ընկերութիւնը։“

Խոստովանվում ենք, ոչ մի լրագիր հայերի մէջ չէ եղել, որ „Մշակի“ պէս այդքան բարձր պահած լինէր հասարակական ամեն երեւոյթների անխնայ քննադատութեան, անողորմ անձնաքննութեան դրօշակը,—բայց ուրիշ կողմից թո՞ղ ամեն մտածող հայ, որի համար մեր լրագրի կարդալը տաս տարվայ ընթացքում փոքր ի շատէ սովորութիւն է դարձել, ձեռքը սրտի վրա դնի և խոստովանվի՝ „Մշակը“ չէ՞ արդեօք որ շատ դիպուածներում, ընդդէմ դարեւոր նախապաշարումների, մէնակ, անվախ հանդէս էր դուրս գալիս՝ միութիւն և սէր քարոզելով։ Մենք չէ՞ինք, որ մեր ցրված, միմեանց հակառակ երիտասարդ ոյժերը համոզում էինք միանալ, մեր միմեանցից անջատված ընկերութիւններին քարոզում էինք մի մարմնի մէջ ձուլվել. մենք չէ՞ինք, որ միշտ, երբ ծնվում էր մի նոր ընկերութիւն Թիֆլիսում, թէ Կ. Պոլսում, ասում էինք՝ միացէք հինի, եղածի հետ, փոխանակ նորը հիմնելու. մենք չէ՞ինք որ միշտ, երբ մի հարուստ կտակում էր իր կարողութիւնը, կամ նուիրում էր մի գումար մի նոր դպրոց հիմնելու համար, կրկնում էինք որ հարկաւոր չէ բազմացնել հիմնարկութիւնները, այլ պէտք է ոյժ տալ եղածներին, եթէ ոչ նորն էլ թոյլ կը լինի, հինն էլ. մենք չէ՞ինք որ խորհուրդ էինք տալիս մեր բարձր ուսում ստացածներին, փոխանակ իրանց դասակարգից դուրս գալու, և քաղաքներում զետեղվելու, վերադառնալ իրանց գիւղը և լինել լուսաւորված գիւղացիներ, միանալ կրկին այն ամբոխի հետ, որից դուրս են եկել, որոնց զաւակներն են նրանք, գործել ժողովրդի համար, որին պատկանում են. մենք չէ՞ինք, որ անդադար յիշեցնում էինք, թէ մեծ վտանգ է սպառնում հայութեանը, եթէ հայը թողնի իր հայրենի հողը, անդադար գաղթի իր հայրենիքից, ուրեմն քարոզում էինք միութիւն մարդու հոգի հետ. մենք չէ՞ինք վերջապէս, որ աղաչում էինք հային միանալ իր այլակրօն հայի հետ, լինի նա կաթոլիկ, բողոքական թէ մահմետական, ազգութեան գաղափարի մէջ, մոռանալով դարեւոր կրօնական ապարդիւն թշնամութիւնները....

Կան, ուրեմն, մեր հասարակութեան մէջ երեւոյթներ, որոնց վերաբերութեամբ մենք անխնայ քննադատող էինք և միշտ կը լինենք, կայ, ուրիշ կողմից հասարակական երեւոյթների մի ամբողջ շարք, որտեղ կողմ դնելով անխնայ, խիստ քննադատութիւն, մաղձոտ կրիտիկա, պէտք է բարձրացնել միութեան դրօշակը։

Մեր ամբողջ հայոց հասարակութիւնը մենք կը բաժանենք երեք որոշ բաժիններին վրա։

Առաջինը, և դա կազմում է մեզանում ահագին մեծամասնութիւն, բաղկացած է եսական, անտարբեր, իրանց համար ապրող, շատ անգամ մայրենի լեզու չիմացող, ազգի, հասարակութեան վրա չը մտածող, միմիայն իրանց փորի, իրանց անձնական կեանքի վրա հոգ տանող անձինքներից։ Սրանց մէջ կայ և անգրագէտ երկրագործ, և անփոյթ արուեստաւոր, և տգէտ վաճառական և իր ծուխի մասին անհոգ հոգեւորական և ունեւոր ընտանիքի տէր, և հարուստ կապիտալիստ և անտարբեր պաշտօնեայ.... Սրանց դէմ, որպէս անշարժ, հասարակութեան առաջադիմութեան համար ապարդիւն ոյժի դէմ, մեղք չէ գործածել խիստ, անողորմ, անխնայ քննադատութիւն, նրանց իրանց անտարբերութենից, ապարդիւն գոյութենից, անշարժութենից սթափեցնելու համար։

Հասարակութեան երկրորդ մասը, որ բաղդաւորապէս աւելի փոքրաթիւ է, ոչ թէ միայն ապարդիւն է, բայց և վնասակար. սրանք հարստահարողներ են, յափշտակիչներ են, վաշխառուներ են. սրանց թւում ամեն դասակարգի և կոչման մարդիկ կարող են լինել։ Սրանց ոչ թէ միայն պէտք է քննադատել, այլ նրանց վրա պէտք է յարձակվել, նրանց խայտառակել։

Կայ վերջապէս մեր հասարակութեան մէջ մի երրորդ բաժին, որ կազմված է գործողներից։ Նրանք ունեն, այո՛, մեծ պակասութիւններ, գործում են մեծ սխալներ, շատ անգամ չը գիտեն զսպել իրանց կրքերը, գուցէ պատահում է որ գործում են և աններելի գեղծումներ,—բայց այնուամենայնիւ դրանք մեր միակ գործիչներն են, մեր միակ առաջադէմ կուսակցութիւն են, հասարակութեան այն մասը, որի վրա է հայութեան ամբողջ յոյսը։ Դրանք մաքի զինուորներ են՝ մեր այլ և այլ ընկերութիւնների ղեկավարները, մեր դպրոցների վարժապետներն ու վարժուհիները, մեր գրողներն ու խմբագիրները, մեր թարգմանիչները, մեր քարոզիչները, մեր դերասանները։ Մի խօսքով այն բոլոր մարդիկ, որոնք ապրում են մտաւոր կեանքով, որոնց կոչումն է գիտակցաբար թէ անգիտակցաբար, այսպէս թէ այնպէս միտք, լոյս տարածել ազգի մէջ։

Խոստովանվեցէք, որ սրանց վրա, որքան էլ նրանք խոշոր պակասութիւններ ունենային, վերին աստիճանի անարդար կը լիներ յարձակվել նոյն անխնայ ձեւով, նոյն չափով, որով յարձակվում ենք անտարերների վրա, բայց մանաւանդ յափշտակիչների կամ ազգը քանդողների վրա։

Չը մոռանանք որ նախ մտաւոր գործողները շատ քիչ են թւով առհասարակ ամեն հասարակութեան մէջ, բայց մանաւանդ մեզանում և երկրորդ որ ամեն բանի համար իր ժամանակը կայ....

Լինում է խաղաղ ժամանակ, երբ կատարվում է պատրաստական աշխատանք։ Այդ ժամանակ քննադատեցէք ամեն բան, յարձակվեցէք ամեն տգեղ երեւոյթի վրա, մինչև անգամ աւելի անխնայ խստութեամբ մտաւոր գործիչների վրա, հետեւելով այն սկզբունքին, թէ ում աւելի տուած է, նրանից աւելի էլ կը պահանջվի։

Բայց կան րոպէներ ազգերի կեանքի մէջ, երբ հարկաւոր է ոչ թէ կրիտիկա, յարձակմունք, կամ մեղադրանք, այն էլ հասարակութեան մէջ միակ գործող ոյժերի դէմ,— այլ հարկաւոր է միութիւն և սէր, հարկաւոր է մոռանալ բոլոր թշնամութիւնները և ձեռք ձեռքի տուած ընթանալ ընդհանուր գործի աջողութեան համար։ Այդ տեսակ ժամանակ, մի ազգի, մի հասարակութեան ճգնաժամի, նրա լինելու կամ չը լինելու րոպէներում, վեր կենալ, աջ ու ձախ յարձակմունք և մեղադրանք թափել՝ կը նշանակէ ջլատել ընդհանուրի ոյժերը, ճնասել ամբողջ գործին, երկպառակութիւն սերմանել, մեռնցել, փոխանակ կենդանացնելու։

Կան րոպէներ, երբ ուշ է քննադատել, իսկ կատարելապէս անտեղի և անտակտ է յարձակվել և մեղադրել։ Պէտք է օգուտ քաղել այն ոյժերից, որոնք կան, լաւ են նրանք, թէ վատ։

Հիմա Թիւրքաց հայերի համար այդ տեսակ ճգնաժամ է։ Հիմա, երբ վճռվում է հայոց խնդիրը, երբ այդպէս էլ Թիւրք կառավարութիւնը աշխատում է երկպառակութիւն ծաղեցնել կաթոլիկ և լուսաւորչական հայերի մէջ, երբ նոյն իսկ լուսաւորչական հայերի մէջ գցում է երկպառակութեան սերմը, թշնամացնելով Ներսէս պատրիարքին Կիլիկիայի կաթողիկոսի հետ, երբ աշխատում է հայաստանցի բնիկ երկրագործ տարրը ճնշել քիւրդերի ձեռքով, —հիմա ժամանակ չէ հայ առաջադէմ, միակ գործող կուսակցութիւնների և անհատների մէջ հին հաշիւները տեսնել, նոր թշնամութիւններ յարուցանել, մեղադրանք և յարձակմունք թափել միմեանց գլխին։ Հիմա մեր բոլոր գործողները, մեր բոլոր մտաւոր զինուորները պէտք է միմեանց աջակցեն, միմեանց հասկանան, միմեանց օգնեն, միմեանց մէջ ձեռք ձեռքի տուած ընթանան, միմեանց ներեն փոխադարձ պակասութիւնները, միմեանց ձայնակցեն, մոռանալով հինը, զգուշանալով նոր երկպառակութիւններ ծնեցնելուց։

Այժմ հայերիս համար հարկաւոր է մի զօրեղ, հեղինակաւոր հովուի, առաջնորդի որոտալից, բայց քաղցր ձայն, որ ահագին բարձրութեան ազգային մի ամբիոնից, դիմելով բոլոր հայ կուսակցութիւններին, դասակարգերին, ընկերութիւններին, բոլոր մտաւոր զինուորներին, բոլոր անհատներին՝ արտասանէր սիրոյ և միութեան այդ հաշտեցնող, Աստուածային խօսքերը «խաղաղութիւն ամենքին։»

Բայց ո՞ւր է այդ ձայնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

24 օգոստոսի

Մեզանում ամենայն մի քաղաքային տնտեսական հարց յառաջ է գնում դանդաղ և յամրաշարժ քայլերով, ամենայն մի հասարակական գործ կաչկանդվում է և անդամալուծվում անսպասելի խոչնդոտներով չնորհիւ մեր անհոգ և անպարտաճանաչ հասարակական գործողների։ Անդադար յառաջ են գալիս մեզանում քաղաքապատկան հարցեր և խնդիրներ մէկը միւսի ետեւից, զոր. ինչպէս՝ «միջնակարգ դպրոցի» հարց «քաղաքային վարչութեան» հարց, «մատենադարան—ընթերցարանի» հարց և պահանջներ, (մինթէ կը պակասի մի համար հոգսեր ու պահանջներ։) Բայց այս բոլոր հարցերը ձգձգվում են ամիսներով ու տարիներով և, վերջ ի վերջոյ մնում են մի և նոյն խճճված հարցերը։

Բերենք այստեղ և մի քանի չչափելի ապացոյցներ հաստատելու մեր ասածները։

Դժուար թէ ճարվի «Մշակի» ընթերցողների մէջ մի այնպիսի բէխաբար, որ քանիցս անգամ կարդացած չը լինի այդ լրագրի էջերում թէ մենք, ալէքսանդրապօլցիքս տասը տարի է, ինչ ցանկանում ենք ունենալ մի «միջնակարգ դպրոց» և դեռ ես չենք կարողացել իրագործել մեր այդ ցանկութիւնը։ Այո՛, այս դպրոցի մասին այնքան գրվեցաւ, որ ճանձրացաւ և գրողը, և ընթերցողը։ Սա մի հին և մաշված ապացոյց է, որ յայտնի է «Մշակի» ընթերցողներին իր բոլոր մանրամասնութեամբ, վասնզոյց թողած այս «դպրոցական խնդիրը», ես դիմում եմ մի աւելի նոր և թարմ ապացոյցի ես առաւել յայտնի կերպով պարզելու յարգելի ընթերցողներին մեր քաղաքային գործոց ղեկավարների անտեսելի թուլութիւնները։

Երկու ամսից աւելի է ինչ «Մատենադարան ընթերցարանի» խնդիրը յանձնված է տեղւոյս հասարակութեան կողմից պ. պ. դէպուտատներին, բայց մինչև այսօր մեր թաղապետական ժողովը չէ դարձրել այդ կարեւոր հարցի վրա պատշաճաւոր ուշադրութիւն։ Չը նայելով, որ մեր թաղապետներից ոչ ոք «քաղաքային ընթերցարան» ունենալու սկզբունքին հակառակ չէ և մինչև անգամ շատերը նրանցից շատ լաւ հասկանում են այդ օգտաւէտ հիմնարկութեան կարեւորութիւնը,—այնուամենայնիւ, այդ հարցը հաղիւ թէ շարժվել է յառաջ մի քայլաչափ։ Զարմանալի է շատ մեր հասարակական գործիչների ցոյց տուած դանդաղկոտութիւնը այս հարցի վերաբերութեամբ։ Ամեն անգամ նրանցից մի քանիսներին յիշեցնելիս կամ դրդելիս լսում ես միշտ մի և նոյն պատասխանը՝—«դեռ հարկաւոր հարցեր կան քննելու, դեռ հարկաւոր խնդիրներ կան տնօրինելու։» Ի՞նչ նշանակութիւն ունի ուրեմն, դրանց կարծիքով, ընթերցարանական հիմնարկութիւնը այս կամ այն փոքր ի շատէ զարգացած հասարակութեան մտաւոր ինքնակրթութեան նկատմամբ, և որքան արժանաւորութիւն, դրանց կարծիքով, մի այդպիսի հիմնարկութեան մասին մատուցած խնդիրը։ Երևի, մեր հասարակական պահանջների շարքի մէջ, մի կողմնակի, գուցէ և մի անհարկաւոր պահանջ մեր պ. պ. թաղապետների կարծիքով։ «Մատենադարան—ընթերցարանի» հարցի մասին նրանց ցոյց տուած սառն վարմունքը

իրաւունք է տալիս ինձ հանել մի այսպիսի եզրակացութեան։

Առհասարակ մեղանում երևում է մի տեսակ տխուր երևոյթ միակողմանի ձգտման, միակողմանի յառաջընթացութեան։ Մեր հասարակութիւնը իր հասարակական գործիչների մեծամասնութեամբ գտնվում է դեռ ևս զարգացման այն առաջնակարգ պերիոդի մէջ, որ բացի դըպրոցներից, ընդունակ չէ ճանաչելու ոչ մի այլ կրթողական միջոց մտաւոր ինքնակրթութեան և յառաջադիմութեան։ Մենք սովոր ենք առհասարակ մի տենդային յափշտակութեամբ բացականչել միայն մի բան՝— «դպրոց, դպրոց և միայն դպրոց։» Իսկ թատրոն, իսկ գրականական երեկոներ, դասախօսութիւններ, ընթերցարաններ և այլ սրանց նման կրթողական հիմնարկութիւններ չունեն մեր հասարակութեան համար ոչինչ գնահատութիւն իրանց բոլոր զարգացնող և բարոյականացնող նշանակութեամբ։

Մեր հասարակութիւնը դեռ ևս չէ ըմբռնել այս ամենահասարակ ճշմարտութիւնը թէ՝ դըպրոցները եթէ անհրաժեշտ են՝ մատաղ սերունդի կրթութեան համար, ընթերցարանական հիմնարկութիւններն էլ ոչ պակաս անհրաժեշտ են՝ թերուս հասակաւորների ինքնուրոյն զարգացման համար։ Իսկ Անդրկովկասի բոլոր քաղաքների մէջ ոչ մի քաղաք չէ ներկայացնում թերուս և անզարգացած հասակաւորների մի այնպիսի մեծ քանակութիւն, որքան Ալէքսանդրապօլը։ Անկարելի է աչքախուփ անցկենալ և չը տեսնել բազմութիւնը այն երիտասարդների, որ կազմում է արդէն մեր քաղաքում մի մեծաքանակ տարր և որի համար ընթերցանութեան պահանջը դարձել է արդէն մի ամենակարևոր մտաւոր պահանջ։ Կորել, անհետացել է արդէն այն դժոխային խաւար ժամանակը, երբ ընթերցասէրին անուանում էին այստեղ «տիրացու» կամ «վարդապետացու», իսկ լրագրութեամբ հետաքրքրվողի ճակատին «աղդասէր» տիտղոսն էին դրոշմում։ Թէ որքան զարգացել է այստեղի երիտասարդների մէջ ընթերցասիրութեան ճաշակը, պարզ երևում է այդ մի սովորական յաճախ կրկնվող երևոյթից։ Փոստատանից լրագիր ստանալու օրերը պէտք է տեսնել թէ որքան երիտասարդական խմբակներ հաւաքված նոյն իսկ փոստատան շինութեան առաջ կարդում են լրագիրներ մի այնպիսի ագահութեամբ, որ յատուկ է միայն մտաւորական քաղցածներին։ Բըթամիտ հին սերունդի վրա անգամ ունենում է իր բարոյական ճնշումը նոր սերունդի այդ գովելի օրինակը, և արծարծում նրանց մէջ եթէ ոչ սէր, գոնէ հակումն դէպի լրագիրների կենդանի, ժամանակակից խօսքը և ընթերցանութիւնը։

Այս բոլոր մխիթարական երևոյթների նկարագրութիւնից յետոյ, թող հիմա ինքը՝ ընթերցողը ենթադրէ՝ թէ որքան կարևոր է հիմնել մեր քաղաքում մի «Մատենադարան-ընթերցարան», որից ստանալի օգուտները կարող է խոստովանվել ամենայն մի անհատ, որ գիտէ գնահատել այսպիսի կրթողական հիմնարկութիւնը։

Եւ մեր ուրիշ որ մէկ հասարակական հիմնարկութիւնից մենք կարող ենք սպասել այն մտաւորական նպաստը, որը մատակարարելու է մեզ «քաղաքային-ընթերցարանը»։

Դպրոցներից.... բայց նրանք, ինչպէս ասացի, ծառայում են մի այլ նպատակի՝ մատաղ սերունդի կրթութեան գործին։ Իսկ բացի դպրոցներից մենք չունենք և ոչ մի հատ, մտաւորապէս և բարոյապէս զարգացնող, ընդհանրական հիմնարկութիւն։ «Կլուբից» գուցէ կասեն մեզ մի քանի տգէտներ։ Այդպէս ասողներին և թիւր դատողների դէմ մենք ունենք միայն մի պատասխան։ Այն հասարակական հիմնարկութիւնը, որ ծառայում է, ըստ մեծի մասին, թուղթ խաղալու, արբեցութեան և կաքաւելու, չունի իրաւունք անուանվել կրթող հիմնարկութիւն, այլ միմիայն անբարոյականացնող։

Միայն քաղաքային «Մատենադարան ընթերցարանը» մի չափաւոր անդամակցական վճարով կարող է, մեր կարծիքով, դառնալ հասարակական մտաւոր ինքնակրթութեան և զարգացման զօրեղ միջոց և բաւականութիւն տալ քաղաքի ընթերցասէր դասակարգի բարոյական պահանջին....

Տեղացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մանգլիս, օգոստոս 24

Համակրելով միանգամայն Վիէննայում հրատարակվող «Journal d'Orient» ֆրանսիական լրագրին և նրա մէջ արդէն լոյս տեսնված յօդուածների ուղղութեան, մենք ամարանոցում հաւաքեցինք 140 ռուբլի հետեւեալ տիկիններից և պարոններից, որոնց անունների ցուցակը սրա հետ ուղարկում ենք «Մշակի» մէջ հրատարակելու։

Նիկողայոս Հայկազեանց 8 ր., Խաչատուր Արվանեանց 3 ր., Մարքար Լաղարեանց 5 ր., Գասպար Տէր-Օհանեանց 10 ր., Արտէմ Սեանեանց 5 ր., Գրիգոր Տէր-Պետրոսեանց 2 ր., Եգօր Միրզոյեանց 5 ր., Եգօր Եղիազարեանց 5 ր., Արտէմ Քարտաչեանց 5 ր., Հայ ոմն 1 ր., Յովհաննէս Քամոյեանց 3 ր., Սերգէյ Մարքարեանց 1 ր., Կոստանդին Խիզանեանց 3 ր., Ա. Ադամեանց 1 ր., Աննայ Միրզոյեանց 1 ր., Ն. Իսարլով 1 ր., Լ. Իսարլով 1 ր., Կէկէլ Լումինեանց 3 ր., Տ. Ղուլիջանեանց 1 ր., Օր. Մ. Ղուլիջանեանց 1 ր., Մարիամ Մէլիք-Հայկազեանց 3 ր., Թինաթին Զօրաբեանց 1 ր., Մարիամ Քամոյեանց 1 ր., Մաթօ 1 ր., Սօֆիա Մելեանց 3 ր., Դոլուխանեանց 3 ր., Ե. Մէլիք-Կարակօզեանց 1 ր., Սոֆիա Զիթախեանց 2 ր., Դարիեայ Միրզոյեանց 1 ր., Նինօ Դիդարեանց 1 ր., Լիզա Աղաբաբեանց 3 ր., Մարիամ Միրումեանց 1 ր., Մարիամ Զիթախեանց 5 ր., Աննա Զիթախեանց 5 ր., Նիկողայոս Զոհրաբեանց 5 ր., Շաշինկա Քարտաչեանց 3 ր., Եփեմիա Թեմուրազեանց 2 ր., Եղիսաբէթ Բարխուդարեանց 1 ր., Տ. Ադամեանց 1 ր., Աննայատ ոմն, 2 ր., Մելանիա Ներեթելեան 1 ր., Սոֆիա Անտոնեան 2 ր., Արշակ Մելեանց 1 ր., Արտէմ Նարինեանց 2 ր., Յովհաննէս Լումինեանց 5 ր., Եփեմիա Եղիազարեանց 3 ր., Նատալիա Մարքարեան 1 ր., № № 1 ր., Խ. Տէր Իսահակեանց 5 ր., Մարիա Տէր Իսահակեանց 5 ր., Նատալիա Տէր-Յովհաննիսեանց 2 ր., Յակոբ Տէր-Ստեփանեանց 2 ր., ընդամենը մէկ հարիւր քառասուն ռուբլի։

Նատալիա Տէր-Յովհաննիսեան, Գասպար Տէր-Օհանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք «Ժուրնալ դ'Օրիանի» համար։ Մոսկվայից, պ. Աւետիս Քալանթարեանցից 4 ր., Կիսլովոդսկից, պ. Ալ. Նազարեանցից 8 ր., Բոստովից, (Դոնի վրա) 6 ռուբլ հետեւեալ անձինքներից, որոնցից իւրաքանչիւրը տուել է մի ռուբլ. Գալուստ Անպէտքով, Սիմէօն Եաղուբեանց, Սամսոն Հախումեանց, Աբբաս Կուլի Զարգարով (պարսիկ), Մարտիրոս Տէր-Աստուածատուրեանց և Թէոդորոս Եաղուբեանց։ Վերջապէս Կարակուրտից, բժիշկ Միրիմանեանից ստացանք 4 ռուբլ։ Ընդամենը կանի 22 ռուբլ, իսկ նախկին 153 ռուբլ գումարի հետ կանի 175 ռուբլ։

—

Ստացանք դարձեալ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար 6 ռուբլ, որից 2 ր. տուել է Ալէքսէյ Տէր-Մկրտչեանց, 4 ր. Նինօ Տէր-Ղազարեանց։ Առաջվայ փողերի հետ կանի 181 ռուբլ։

—

Ընդամենը «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար ստացած ենք 321 ռուբլ։

—

Այս ամիսը ԹԻՖԼԻՍՈՒՄ լինելու հնագիտական ժողովի համար արդէն հաւաքվում են այլ և այլ տեղերից գիտնականներ։ Բայց լսում ենք, թէ չը նայելով որ յայտնված է եղել, որ ժողովը եկող գիտնականները երկաթուղիներում իրաւունք կունենան տեղերի կէս գինը վճարել, երկաթուղիների վարչութիւնները ամեն տեղ անտես են անում նրանց ներկայացրած անդամական տոմսակները, ասելով թէ «մեզ ոչինչ յայտնի չէ ժողովի մասին» և առնում են գիտնականներից տեղերի ամբողջ գինը։ Թիֆլիս գալով, մեր ուսումնական հիւրերը մոլորված են մնում, ոչ ոք նրանց չէ ընդունում, նրանց համար պատրաստված չեն սենեակներ հիւրանոցներում, նրանք չը գիտեն, ում դիմեն, ինչ հիւրանոց գնան։ Վերջ ի վերջոյ նրանք գընում են առաջին պատահած հիւրանոց, որտեղ ամեն բանի համար պէտք է վճարեն, չը նայելով որ նրանց խոստացած էր անվարձ սենեակ։

—

Հայրենասէր Յովհաննէս Թիֆլիսի մէջ մի քանի օր մնալով, ուղևորվեց դէպի Էջմիածին։ Նա խնդրեց մեզ յայտնել որ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար ստացել է փող հետեւեալ պարոններից. այդ փողը նա արդէն կանխիկ վճարած էր Վիէննայի լրագրին, Աւստրիայի մայրաքաղաքում անցնելու ժամանակ։ Բաթումի մէջ պ. Մէքուրնութեանից նա ստացել է 8 ռուբլ, Փոթիում Գէորգ քահ. Գնունուց 8 ր., Յովհաննէս Հասան-Ջալալեանից 8 ր., Աստուր Ազատեանից 8 ր., Էլիզբար Բաբալեանից 8 ր., Թիֆլիսում Յակոբ Տէր-Յովհաննէսեանից 4 ր., Ախալցխայում Գրիգոր Ղազարեանից և Ճարակեանից, իւրաքանչիւրից 8 ռուբլ։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են։ «Մեր կովկասեցի ուսանողները կարծելով թէ համալսարանական դասախօսութիւնները ուշ կը սկսվեն, դեռ չեն հաւաքվել Մոսկվա։ Լաւ կը լիներ, որ չը տապէին, որովհետև օգոստոսի 21-ին «Московскій Листокъ» լրագրի № 16 մէջ կարդացինք Մոսկվայի համալսարանի ռէկտորի կարգադրութիւնը, որով դասախօսութիւնները սկսվում են օգոստոսի 24-ին։»

—

Մեզ գրում են ՍՂՆԱԽԻՑ։ «Այս օրերս իմացվեցաւ որ Սղնախի շրջակայ գիւղերից մի քանիս կարկուտից մեծ վնաս են կրել։ Այսպէս, ուրեմն, խաղողը, մի կողմից մոխրից, միւս կողմից էլ կարկուտից վնասվելով, այս տարի գինին զգալի չ կերպով կը թանգանայ մեզանում։»

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են։ «Պետրոս Գանջումեան մի չքեղ օրիորդական դպրոց է կառուցանում Մոզդոկում և մօտ օրերս պարոնը մեր երկսեռ դպրոցին 10 հազար ռուբլ նուիրեց։ Անդամակ լինելու պատճառով իր մահից յետոյ բոլոր կայքը խոստանում է կտակել հայոց երկսեռ դպրոցին։ Պ. Գանջումեան ունի երկու մեծ մագազիններ և երկյարկանի երկու մեծ, գեղեցիկ տներ։ Ասում են այդ կայքից տարեկան եկամուտը հասնում է 50 հազար ռուբլ դումարի։ Դպրոցներում պէտք է դասաւանութիւն անեն համալսարանական ուսուցիչներ, մեծ ռոճիկով, դասաւանութիւնը պէտք է լինի հայերէն լեզուով։ Տղայոց դպրոցը կը կրի իր անունը, Պետրոսեան դպրոց, իսկ օրիորդականը իր ամուսնու անունը, Նունէեան դպրոց։»

—

Հաւլաբարի թաղից մեզ հաղորդում են հետեւեալը։ «Անցեալ շաբաթ Հաւլաբարի Զ. եկեղեցում ննջեցեալ է եղել։ Ննջեցեալի տէրը, չքաւոր մարդ լինելով, հրաւիրել է մի վարդապետին, վերջին հանդէսը կատարելու։ Եւ ահա դիակի առջև տօրգ է սկսվել. վարդապետը պահանջում էր 10 ռուբլ, իսկ ննջեցեալի տէրը տալիս իր միայն 6 ռուբլ։ Վերջապէս համաձայնվեցան 8 ռուբլով, որից 6 ռուբլ վարդապետին, 1 ռուբլ ծառային և 1 ռուբլ ֆայտոնի փող։»

—

ԹԻՖԼԻՍԻ հայոց թատրոնի համար Կ. Պոլսից հրաւիրված դերասաններն ու դերասանուհիները հասան օգոստոսի 27-ին Թիֆլիս։ Ասում են որ առաջին ներկայացումը կը լինի սեպտեմբերի 3-ին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Գամբետտա դիմեց իր ընտրողներին հետեւեալ նամակով. „Սիրելի համաքաղաքացիներ, օգոստոսի 21-ի ընտրութիւնների ժամանակ ես իմ պարտականութիւն համարեցի ոչինչ զանազանութիւն չը դնել 20-դ շրջանի երկու բաժինների մէջ։ Ես կամենում էի իմ քաղաքականութեան կատարեալ և հասկանալի հաշիւ տալ 20-դ շրջանի ընտրողներին։ Բելվիլի առաջին շրջանի մէջ ձայների նշանաւոր մեծամասնութեամբ ընտրված լինելով, ես այսօր տեղեկացայ, որ երկրորդ շրջանի մէջ ընտրված եմ միայն համեմատական մեծամասնութեամբ։ Այժմ ես արդէն ընդունել եմ իմ վճիռը։ Ես իմացայ այն, ինչ որ ինձ հարկաւոր էր գիտենալ։ Ես անօգուտ և ընդհանուր քուէարկութեան համար (որի հետ խաղալ չէ կարելի) անվայել եմ համարում կրկնաքուէարկութիւնը, որ միևնոյն ժամանակ գործնական հետևանք չէր ունենայ, որովհետև միևնոյն է մի քանի շաբաթից յետոյ հարկաւոր կը լինէր երկու շրջաններից մէկը ընտրել։ Ես աւելի լաւ եմ համարում այդ ընտրութիւնը այժմ անել։ Ես եղել եմ և կը լինեմ Բելվիլի առաջին շրջանի պատգամաւոր։ Բաւական է։ Զը նայելով մեր թշնամիների ցաւութեան և բրուտութիւններին, որոնք իրանց ջանքերը միացրին մեր դէմ, ձեր ընտրութիւնը վրձռված է։ Այդ ընտրութիւնը հաստատեց, որ Փարիզի ազգաբնակութեան ամենաթեթևամիտ և շուտ սխալվող մասի հետ, միշտ գտնվում է հանրապետական մի մեծամասնութիւն, որ հաւատարիմ է մնում քաղաքական առողջ դատողութեանը։ Դրա ապացոյցներ շատ կան թէ այստեղ և թէ ամբողջ Ֆրանսիայի մէջ։ Դրա նշանակութիւնը չեն կարող ոչնչացնել ոչ մի քանի կատաղած լրագիրները, ոչ արմատականների անզուսպ աղաղակները և ոչ յաղթված յետադէմների խեղդված հեգնութիւնները։ Այդ անամթները երբէք չեն կարող ՃՆՇԵԼ այն հաստատ, առողջամիտ, ազնիւ, ուժեղ և յաջորդական վերանորոգիչ քաղաքականութեան աջողութեանը, որին մենք հետևում ենք։ Մենք կընթանանք առաջադիմութեան կանոնաւոր և յաջորդական ճանապարհով և կանգ կառնենք միայն ժողովրդի կամքը իմանալու համար, ամեն բան ժողովրդի կամքից կը սպասենք և ոչ թէ բռնութենից։ Մենք միշտ պատրաստ ենք ընդդիմադրել թեթևամիտներին և յետադէմներին։ Միշտ պատրաստ կը լինենք պահպանել կարգը և հանրապետական առաջադիմութիւնը։ Ձեզ համար դժուար չի լինի արժանաւոր և պատուաւոր ներկայացուցիչ գտնել Բելվիլի ընտրողական շրջանի երկրորդ բաժնի համար, մի ներկայացուցիչ, որ հանրապետութեան փորձված և հաւատարիմ ծառայ լինի և որ իր անցեալով արժանի լինի ձեր հաւատարմութեանը։ Էլի մի խօսք. շնորհակալ եմ բոլոր այն ընտրողներից, որոնք չը դայթակղվեցան և հաւատարիմ մնացին իրանց պատգամաւորին։ Յաջողութիւն։" Բելվիլի առաջին շրջանի պատգամաւոր Լէոն Գամբետտա։ Այժմ ոչ ոք չէ կասկածում, որ Գամբետտա կընդունի Ֆրանսիական մինիստրնախագահի պաշտօնը։—Հարցը նրանումն է միայն, թէ Գրեվի կամաւորապէս կը յանձնի Գամբետտային կազմել նոր մինիստրութիւն, թէ նա կը սպասի պատգամաւորների նոր ժողովի վճռին, որից ստիպված Գրեվի կը դիմէ Գամբետտային։ Գամբետտայի վերև տպված նամակը ապացուցանում է, որ նա կարել է իր բոլոր յարաբերութիւնները արմատականների հետ։

ԱՄԵՐԻԿԱ

—

Գարֆիլդի կեանքը նորերումս խասկածելի եղաւ, երբ յայտնեցին, թէ անհրաժեշտ է երկրորդ անգամ նրան ենթարկել խիրուրգիական օպերացիային։ Անհրաժեշտ էր մի նոր անցք բացանել, որտեղից դուրս գար վերքի մէջ հաւաքված ժահը, որպէս զի հիւանդի արիւնը չը վարակէր։ Այդ նպատակով մի նոր օպերացիա կատարեցին, որ

բաւական վատ ազդեցութիւն ունեցաւ հիւանդի թուլացած կազմուածքի վրա։ Հիւանդի տենդային դրութիւնը սաստկացել էր, այնպէս որ բժիշկներն էլ երկիւղ էին կրում Գարֆիլդի կեանքի համար։ Այդ երկիւղը երկար չը տևեց և շուտով երևացին հանգստացնող բիւլետեններ։ Նախագահը կարողացաւ մինչև անգամ ստորագրել իր ազգանունը մի պաշտօնական թղթի տակ, որ վերաբերվում էր Կանադայից փախած մի դրամանենգի։ Այդպիսի թղթի համար անհրաժեշտ է նախագահի ստորագրութիւնը և գլխաւոր քարտուղարներն բժիշկների հետ խորհրդակցելուց յետոյ առաջարկեց նախագահին ստորագրել այդ թուղթը։ Վերջինը իմանալով այդ, ինքը ցանկացաւ ստորագրել։ Առաջ մի փորձ անելուց յետոյ նախագահը ստորագրեց իր ազգանունը։ Այդ հանգամանքը շատ ուրախացրեց Գարֆիլդին շրջապատողներին, որովհետև բժիշկները դրանից եզրակացրին, որ Գարֆիլդի շարժվող ջղերը նոյնքան բնական դրութեան մէջ են, որքան և նրա ուղեղը ուրեմն, հարկաւոր է միայն նրա վերքը բժշկել։

Կարդինալ Եակոբինի պապի անունով մի հեռագիր ուղարկեց Բլենին, որով պապը ցաւակցութիւն է յայտնում Նախագահ Գարֆիլդի դրութեանը և աղօթում է նրա առողջանալու մասին։ Բլեն իր պատասխանի մէջ ասում է, որ յոյսը չէ կորցնում, թէպէտ հիւանդի դրութիւնը բաւական վտանգաւոր է։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 16 օգոստոսի 1881

«Մշակի» 123 և 130 համարներու մէջ երկու թղթակցութիւններ կային Կ. Պոլսէն, որոնց մէջ Ներսէս պատրիարքի հրաժարականին սարին վար կառնէին հայ էֆէնտիներու դիմակն և ցոյց կը տային թէ ո՞ր աստիճան վստահութեան արժանի են հայ պէյերն ու բաշաներն։ Հարկ չէ ըսել թէ «Մշակի» այդ յօդուածներն ո՞րքան յուզում պատճառեցին այստեղ և ինչ զգացումներ երեան հանեցին։ Զգացում զայրոյթի էֆէնտիներու կողմէն, որոնք առաջին անգամ կը տեսնէին մէկ հայ օրագիր որ կը յանդգնի իրենց նուիրական անձին դպիլ։ Զգացում սուտ և չողոքորթ բարկութեան այստեղի լրագրաց կողմէն, որոնք ի հարկէ վախնալով արտատպելու այդ յօդուածները որ հասարակութիւնը անոնց չարունակած ճշմարտութեան տեղեակ չըլլայ, օգուտ քաղեցին այդ պէյերը և էֆէնտիները պաշտպանելու, հազար և մէկ ստութիւններ հնարելով, որպէս զի անոնց հաճելի անցնին և գրպաններն զգայ անոնց հաճոյքին ապացոյցը։ Զգացում գոհունակութեան վերջապէս, «Մշակ»-ները կարդացողներու կողմէն, որոնք տեսան թէ ժողովուրդը պաշտպանողներ կան տակաւին այդ խարդախ դաւաճաններու մեքենայութեանց դէմ, երբ այս վերջինները իրենց շահուն համար անխոստովանելի միջոցներ ի գործ կը դնեն ճիշդ այն ժամուն ուր հայուն կենաց կամ մահուան վճիռը կը տրուի։

Թող պ. Տ. Ց. Շ. «Մասիսի» պատահական թղթակիցը պաշտպանէ անոնք ալ ինչպէս պաշտպանել կաշխատի քուրմը և իր արքանեակը։ Բայց այստեղ իր աշխատութիւնը աւելի ծանր պիտի ըլլայ, վասն զի եթէ Բէթէրսպուրկի մէջ իւր ծուխերը երկուք են միայն, այստեղ քանի մը տուզինաներ կրնանք հաշուել անոնց պէս։

Ժողովուրդը լաւ կը ճանաչէ այստեղի տէրութեան պաշտօններու մէջ գտնուող հայերը և իր էստէնթովը ծուռ աչքով կը նայի ի հարկէ անոնց վրայ։ Բայց ինչ ընէ խեղճ ժողովուրդը երբ անոնք այնպիսի դիրքի մը մէջ կը գտնուին որ ամեն չարիք կրնան ազգին հասցուցնել և այնպիսի շրջանի մը մէջ կապրին ուր զրպարտութիւնը հաճոյքով կը լսուի և մատնութիւնը կրնայ առատօրէն վարձատրուիլ։ Այդ էֆէնտիներուն պէյերուն և փաշաներուն զատ զատ կենսագրութիւնը դիւրին է ըսել։ Դիւրին է ապացուցանել թէ ինչ կարելի է սպասել այդպիսի մարդերէ։ Բայց ինչ պիտի շահի «Մշակի» ընթերցողը, եթէ ոչ անզսպելի մի նողկանք, մանաւանդ երբ մէկ քանի պէյի և բաշայի կենաց մանրամասնութեանց մտնենք։ Անոնք որ հարուստ կը համարուին կամ աղնուական (?) սերունդէ, թող մէկ մէկ հաշուեն բարոյապէս և նիւթականապէս ազգին ըրած օգուտնին։ Իրենց հայրերուն և պապերուն հիմնած, կառուցած, ճոխացուցած եկեղեցիները, հիւանդանոցները, դպրոցները խեղճ և ողորմելի վիճակի մէջ են շատ տարիներ է։ Ի՞նչ ըրին այդ անզգայ և մոլի պարոնները։ Անոնք որ ստացուածքնին փճացուցին, միթէ ազգին օգտին համար էր, թէ մի քանի օտարազգի անարգ արարածներ խնդացնելու համար..... վրանին։ Անոնք որ տակաւին պահած են հարստութիւնին, քանի զըրուշ կը տան ազգային հաստատութեանց։ Պատրիարքարանի ծոմարները կեցած են։ «Խրիմեանի օրով ազգային պարտքին բարձման նպաստեցին» կըսեն և կը մոռնան յիշելու որ եթէ անոնցմէ մէկ քանին համեմատաբար չնչին գումարներ տուին, այն ալ այն ժամանակի էպարքոսի ճնշմամբն էր որ Խրիմեանը յաջողեր էր կանխաւ չահել և այն ալ իրենց մէկ քանի առակս մնացած գործերն Եպարքոսի չնորհիւ չուտով լմնցունելու յոյսով։

Իսկ էֆէնտի ըսուած խումբին գալով, թէպէտ ազգը անոնցմէ ոչ դրամական և ոչ բարոյական նպաստի կը սպասէ, վասն զի ոչ դրամ ունին նուիրելու և ոչ բաւական խելք ի բարին գործելու, սակայն չենք կարող հանդուրժել որ անոնք անխիղճ և անզգուշ կերպով դաւադրեն ազգին դէմ և հարկ կայ որ իրենց արարքը հրապարակին։ Բարոյապէս ալ անոնք ոչինչ են հայուն համար, վասն զի անոնց մեծագոյն մասը իրենց տիտղոսներովը և աստիճաններովը մէկ տեղ, ազգին մէջ համարուած տգէտներէն են։ Ոչ մէկը կանոնաւոր ուսում չէ առած և գիտենք այնպիսի էֆէնտիներ որ աշխարհագրութիւն անգամ ուսած չեն։ Եթէ մէկ ճիւղի մէջ կը փայլին, այն ալ սա է թէ թիւրքերու նման բարևել գիտեն, անոնց պէս կը հնչեն, իրարու քոմբլիմաններ կուղղեն, վերջապէս կաշխատին որ իրենց ողնաշարը միշտ կակուղ պահեն, որ պէտք եղած անկիւնով կարենան ծռել։ Իսկ ուսանել, խորհել, գրել, ինչ պէտք։ Անոնք յառաջանալու համար անօգուտ բաներ են։ Երեսուն տարի է Բ. Դուռը հայ էֆէնտիներ եկեր գացեր են. թող ցոյց տան մէկուն, չէ թէ գիրք մը, այլ որ և է նիւթի վրայ չնորհքով երկու տող գրած ըլլալը։

Առանց երկարօրէն աշխատելու այդ էֆէնտիներուն ազգին վրայ վատ ազդեցութիւնը ցոյց տալու համար, բաւական է միտք բերել թիւրքին հիմակուան քաղաքականութիւնը. և հայ պաշտօնեային կատարած դերը ինքնիրեն կերևայ։ Ցայսմիկ բան է թէ թիւրքը այս միջոցիս ամենամեծ շահ ունի հայկական խնդիրը խեղդել եթէ հնար է, և ասոր համար կաշխատի ամեն միջոցներով որ հայը ընկճուի առաւել թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Այստեղի օրագիրները ուրիշ կերպ չեն կարող խօսել եթէ ոչ ըսել թէ հայը թիւրքէն չուզեր բոլորովին զատվիլ և թէ հայուն և թիւրքին շահերը իրարու կցորդ են։ Բայց ճշմարտութիւնը այն է թէ այդ շահերը միշտ իրարու հակառակն են և պիտի ըլլան։ Թիւրքը իրեն համար մեծ հարուած մը պիտի համարի եթէ Հայաստանը բարեբաղդի ինչպէս որ մեք կը փափագինք, իսկ թիւրք կառավարութեան որ և է կերպով զօրանալը հայոց ազգային յայտնապէս վնաս է։ Այս այսպէս ըլլալով կարող եմք սա տիլէմը մէջ բերել։ Կամ թիւրքին ծառայութեան մէջ գտնվող հայ մը պէտք է թիւրքի շահերուն նպաստէ, և այն ժամանակ իր ազգին շահերուն դէմ գործած կըլլայ, կամ թիւրքի դրամը ընդունելով, հայուն օգտին պիտի աշխատի, և այն ժամանակը մատնութեան կամ վստահութեան զեղծման յանցանքը պիտի գործէ մշանջենապէս։ Այս տիլէմէն ոչ ոք կրնայ խոյս տալ։ Եւ երբ կուգան մեզ վստահացնելու թէ այդ էֆէնտիները բնաւ ազգին գործերուն չեն խառնուիր, կը ստեն բոլորովին։ Անոնք ոչ միայն ազգային պաշտօններ յանձն առած են միշտ, այլ և շատերուն համար ազգային գործերը պատուանդան մը եղած են տէրութեան գործոց մօտենալու համար։ Օրինակներն անհամար են։

Պէտք չէ նաև մոռնալ որ թիւրք կառավարութիւնը իր մօտը այն հայ պաշտօնեաները կապրեցունէ և կը յառաջացնէ, որոնց վրա բոլորովին վստահ է որ ուզած դերը կրնայ անոնց կատարել տալ։ Այս բանին համար երեսանց ամեն պատիւ կընէ իրենց թիւրքը և մեր էֆէնտիները ինքզինքնին անոնց հաւասար կը կարծեն և չեն գիտեր թէ քամակնին դարձունելնուն պէս դարձեալ էրմէնի կեավուռու կըսեն անոնց։

Եթէ մէկը յանդգնի ուրանալ մեր այս խօսքերն հայ էֆէնտիներուն առ ազգն ունեցած զգացումներու նկատմամբ, պատրաստ եմք յականէ յանուանէ ըսել թէ ո՞րն է այն էֆէնտին որ Դրան պիւռոներու մէջ Ներսէսի ձևերը կը ծաղրէ որպէս զի թիւրքերը խնդան, թէ ո՞րն է այն էֆէնտին որ ցերեկները պաշտօնարանները խօսածներէն չը բաւականանալով, ամբողջ ձմեռը Բէրայի հայ սալոնները պտտեցաւ պատրիարքին արարքները պախարակելու համար իբր թէ թիւրքերուն աչքէն հանեց հայերը. թէ որոնք էին այն պէյը և այն էֆէնտին որ պատրիարքարանի մի յիշատակագիրը գողնալով, տէրութեան յանձնեցին զիրար ամբաստանելու համար իբր նորա հեղինակը և նոր ապացոյց տուին մեզի թէ Դուռը իրաւցընէ անհաւատարիմ և վռնդուելու արժանի կը համարի այն հայ պաշտօնեան որ ազգային գործերով կը զբաղի։ Կըրնանք նաև ցոյց տալ թէ ո՞րն է այն «ազգասէր» հայ էֆէնտին որ դեռ քանի մը օր առաջ Բ. Դրան միջնորդութեամբ պ. Նիկողոսեանը Ռուսիոյ դեսպանատան մատնեց իբր թիւրքիոյ քաղաքականութեան վնասակար մէկ անձ.... Վերջապէս կարող եմք անուանել այն էֆէնտին որ երբ մի վանեցի կաղաչէ իրեն անցեալ օր որ իր ազդեցութիւնը ի գործ դնէ հայոց կրած հարստահարութիւնները թեթևցնելու համար, էֆէնտին անարգանօք, վասն զի թիւրք մը ներկայ էր այնտեղ «Ցատա պէթէր օլսունլար» կը պատասխանէ (թող աւելի վատ ըլլան)։

Դիտէք Բ. Դուռը ինչպէս մարդիկը չը պահէր իբր հայ պաշտօնեայ իրեն քով։ Օտեանը, որուն ազգային ջերմ զգացումները, ազնիւ և բուղխ սիրտը և գեղեցիկ տաղանդը ծանօթ եղան վերջապէս կառավարութեան։ Նա ոչ պաշտօնի, ոչ աստիճանի, ոչ դրամի և ոչ պատուանշաններու կարող էր զոհել իր ազգին շահերը, և ասոր համար պաշտօնանկ եղաւ գուցէ ցկեանս և հիւանդ ու անկար կը դեղերի երկու տարիէ ի վեր օտար աշխարհներ և սրա համար ազգը կը բարեմաղթէ նոյն վերջը ինչ որ արդարութիւնը չնորհեց Աէէքօ փաշային։ Տ. Ց. Շ. եթէ փոքր ինչ կը ճանաչէ Օտեանը, գիտէ նաև թէ ինչու այնքան բարձրանալէն ետքը պաշտօնանկ եղաւ, ուսկից կրնայ հետևցնել մեզի հետ թէ ինչ կերպիւ կը գործեն միւս էֆէնտիները ազգին շահերուն մասին։

Մենք կուզենք այս միջոցիս ճանչնալ մեր բարեկամները ուր որ ալ ըլլան, որպէս զի վստահանանք մեր բաղդը անոնց. բայց կուզենք նաև որ մեզ ճանչցունեն ազգին գաղտնի թշնամիները որ ըստ այնմ վարուինք անոնց հետ։ Այս բանը մեզի ամենամեծ ծառայութիւն մը ընել է։ Ուրեմն բնաւ պէտք չէ զարմանանք որ այս ծառայութիւնը մատուցանելու նախաձեռնութիւնը ստանձնողը դարձեալ «Մշակն» է։

Ե. Ս.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 օգոստոսի։ Դանցիգից հաղորդում են, որ իշխան Բիսմարկ հասել է այնտեղ երէկ ժամի 4-ին։ „Новое Время“ լրագրին Բերլինից հեռագրում են, թէ տարածված լուրերի համեմատ կոմս Մոլտկէ ներկայ կը լինի Կայսրների տեսութեան ժամանակ։ Երէկ հասաւ Ս. Պետերբուրգ Մոսկվայի գլխաւոր նահանգապետ իշխան Դոլգորուկով։ Մոսկվա հասել է գեներալ Սկոբելև, որ տարածված լուրերի համեմատ կուղևորվի Մագիլէով, որտեղ սեպտեմբերի 1-ից զօրախաղեր կը սկսվին։ „Порядокъ“ լրագիրը հաղորդում է իբրև լուր, որ կառավարչական շրջանների մէջ քննվում է մի նախագիծ կողմնակի հարկերը սահմանափակելու մասին։ “Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. օգոստոսի 26-ին Դանիայի թագուհու ծընընդեան օրը Կայսրուհու մօտ եղած տիկինները Դանիական սվիտայի համար մի նախաճաշիկ պարարատեցին Բաբիգոնսկի պալատի մէջ, որտեղ անսպասելի կերպով հասան Կայսրուհին, Դանիայի թագաւորը և թագուհին։

ԴԱՆՑԻԳ, 28 օգոստոսի։ Գերմանական կայսրը, թագաժառանգը և Մեկլենբուրգի մեծ դուքսը հասան այստեղ առաւօտեան $6^1/_2$ ժամին։ „Держава“ նաւը, որ ուշացաւ սաստիկ մառախուղի պատճառով, ըսպասվում է միայն ճաշից յետոյ։ Այդ պատճառով կայսր Վիլհելմի ուղևորութիւնը Նէյֆարվասեր, որ նշանակված էր առաւօտեան 9 ժամին, յետաձգված է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 օգոստոսի։ Դանցիգից հաղորդում են. Կայսերական նաւատորմը հասաւ այստեղի նաւահանգիստը կէսօրին։ Ժամի 2-ին կայացաւ Կայսերի տեսութիւնը պրուսական „Հոհենցոլերն“ նաւի վրա։ Այդ նաւերի վրա Բարձր Հիւրերի համար ճաշ էր պատրաստված։ Երէկ Հասագայի մէջ վախճանվեցաւ Նիդերլանդի իշխան Ֆրիդրիխ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 օգոստոսի։ Դանցիգից հաղորդում են. Այսօր օրվայ $9^1/_2$ ժամին հանդիսաւոր կերպով մտան քաղաքը ռուսաց և գերմանական կայսրները։ Այդ ժամանակ եկեղեցիների մէջ զանգահարում էին և թնդանօթներ էին արձակում։ Նորին Մեծութիւն թագաւոր Կայսր Ալէքսանդր III Արտուսհօֆի մէջ տուած ճաշից յետոյ բարեհաճեց յետ ուղևորվել։

ԿՐՕՆՇՏԱՏ, 29 օգոստոսի։ Այսօր երեկոյեան Դանիայի թագաւորը և թագուհին բարեհաճեցին Պետերգոֆից ուղևորվել Դանիա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 օգոստոսի։ „Новости“ լրագիրը հաղորդում է. Նորին Մեծութիւն Կայսրը, որ գերմանական կայսրի հետ տեսնվելուց յետոյ մտադիր էր յետ դառնալ, ի նկատի առնելով Դանցիգի ներկայացուցիչների խնդիրքը, ընդունեց հրաւէր ճաշի համար, որ կայացաւ երէկ քաղաքի կենտրոնում Արտուսհօֆի հին շինութեան մէջ։ Կայսրի մուտքը Դանցիգ փառաւոր էր. քաղաքը զարդարված էր դրօշակներով և գորգերով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 օգոստոսի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Դանիայի թագաւորը, թագուհին և Գլիւկսբուրգի իշխանը ուղևորվեցան Պետերգոֆից կոպենհագեն երեկոյեան $7^1/_2$ ժամին։ Կայսրուհին, ժառանգը և Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչ ուղեկցում են նրանց Կրոնշտատից դուրս։ Կայսրուհին կը վերադառնայ այսօր Կայսրի հետ։ „Русскій Инвалидъ“ լրագիրը հաղորդում է. Թագաւոր Կայսրը ողորմաբար բարեհաճեց հաստատել այն նախագիծը, որով շատացնվում է գեներալների և օֆիցերների ճաշի փողը և որով սուբալտերն օֆիցերներին աւելորդ ռոճիկ է նշանակվում 183 ր. տարեկան իբրև ճաշի փող սկսեալ 1882 թ. յունվարի 1-ից։ Հրատարակված է բարձրագոյն հրովարտակ, որ տուած է Տերեկի կոզակ զօրքերին 1877 թ. այդ զօրքերին շնորհված Գէօրգեան դրօշակը ուղարկելու առիթով։ Հրովարտակի մէջ ասված է. „Թող վկայէ այս սրբազան դրօշակը Տերեկի կոզակների սերունդի փառքը և քաջութիւնը և դէպի Ներանց ունեցած մեր անփոփոխ բարեհաճութիւնը“։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՑ, կակաօ, ՇՈԿՈԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուզօկներ, ՄԱՏՈՒՅԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՅԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբրիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՑ** պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՅԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., րէվօլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և րէվօլվերների թիֆլիսում:

2—100

ԶԱՑՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՏԷՐ-ԵԶՆԻԿԻ աչխատասիրութեամբ հետևեալ ձեռնարկները վաճառվում են բացառապէս «Կովկասեան» Զաքար. Գրիգորեանի գրավաճառանոցում.

1) Դասագիրք հայկ. ձայնագրութեան . 30 կ.
2) Մանկական ձայնագրեալ երգարան . 40 կ.
3) Մանկական երգարան առանց ձայնագրութեան . . . . . 20 կ.
4) Խմբական երգեր ձայնագրեալ քառաձայն. . . . . 50 կ.

Գումարով առնողներին զիջումն կը լինի:

2—10

---

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ անունով **ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ** դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրավաճառանոցներում:

Գինն է 40 կոպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** վճարելով և ճանապարհածախսը իր վրա առնելով՝

Թող դիմէ մեզ հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ.— На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцъ.“

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՄԻ ԿԻՆ ցանկանում է պահել ուսում նարանների օտարազգացի աշակերտներին ամենաձեռնտու **ԳՆԵՐՈՎ**: Հասցէն Նօվօ-Արսենալնայա փողոց, Գիօրգի Իօրդանովի տանը № 28, հարցնել **ԱՆՆԱ ԱԲՐԱՄԵԱՆՑԻՆ**:

2—4

ՍՕԾԱԿՆԵՐ կոտորելու փոշի: Ծախվում է **ԾԱՏՈՒՐՕՎԻ** լամպի մագազինում:

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃԱՃԻ**:

46—100

ԲԱԳՈՒ
ԿՕՄԻՍԻՕՆԷՐԱԿԱՆ ԿԱՆՏՈՐԱ.

Պատիւ ունիմ յայտնելու, որ այսուհետև ընդունում եմ ամենայն տեսակ **ԿՕՄԻՍԻԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** կատարել Բագուայ մէջ. ցանկացող պարոններին խնդրում եմ ուղղակի դիմել ինձ իմ հասցէով.

Въ Баку. *Абелю Давидовичу Апресяну.*

Յանձնարարութիւնք կը կատարվին կատարեալ և անյապաղ:

Խոնարհաբար խնդրում եմ նաև այն անձինքներից, որոնց մօտ մնացել են իմ հրատարակութեան „Թենթի“ ապառիկներ կամ վաճառած գրքերի փողերը, անմիջապէս մեզ հասցնել, կամ ուղարկել Շուշի պարոն Յակոբ Մուսայելեանցին:

Կոմիսիոնէր Աբել Ապրեսեանց.

ԱՐԴԷՆ ԾԱԽՎՈՒՄ Է „ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“ ԱՆՈՒՆՈՎ ՄԵՐ ՁՈՐԲՈՐԴ տարուայ դասագիրքը **Կենտրոնական** և **Կովկասեան** գրավաճառանոցներում:

Գինն է 60 կոպէկ

Գումարով առնողներին զիջումն կը լինի:

Իսկ ով ցանկանում է հատը 55 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԽԻԿ** վճարելով Թող դիմէ մեզ հետևեալ հասցէով.

Въ Тифлисъ.—На Авлабарѣ. Ивану Петровичу Назарьянцъ.

Յ. Նազարեանց

13—25

ԶԱՔԱՐԻԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՒԱՃԱՌԱՆՈՅԻ“ հրատարակութեամբ լոյս են տեսած հետևեալ ԴԱՍԱԿԱՆ և ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐԵԱՆՔԸ:

1	Սիմէօնեանց Մ. Ժողովածու թուաբանական խնդիրների մ. ա. (ամբողջ թուեր)	50 կ.
2	» Նոյնը մասն բ. (կոտորակներ)	50 »
3	» դասագիրք թուաբանութեան	65 »
4	Ղուկասեանց դասագիրք ընթերցանութեան	40 »
5	» » ընդհանուր պատմութիւն հին դարը մ. ա	80 »
6	Սիմէօնեանց Պ. Սրբազան պատմութիւն հին կտակարանի հ. ա	60 »
7	» » » նոր կտակարանի հ. բ	60 »
8	Տէր Ակորեանց դասագիրք ռուսաց լեզուի	60 »
9	» ընթերցարան մասն առաջին	25 »
10	» դասատետր աղօթից	7 »
11	Զ. Գրիգորեանց մարդակազմութիւն	50 »
12	Սիմէօնեանց Ն. դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան հ. ա. մասն նախագիտելիք 5 պատկերով	35 »
13	— Նոյնը հ. բ. մասն ուսումնական և բնական 31 պատկերով	60 »
14	— — հ. գ. մասն քաղաքական	60 »
15	Բահաթրեանց քերականութիւն աշխարհիկ լեզուի	25 »
16	Երզնկեանց մանկական երգարան	20 »
17	— Ձայնագրեալ մանկական երգարան	40 »
18	Գամար Քաւիպայ մանկական ոտանաւորներ և երգեր	20 »
19	Միրիմանեան թուաբանութիւն (թուեր)	12 »
20	կօնդրատենկօի գծագրութեան օրինակներ	40 »
21	Քերական-Այբենարան հին ոճով	10 »
22	Ցողացաններ չորս երես թերթը	5 »
23	Շարժական տառեր մեծատառ և փոքրատառ թերթը	5 »
24	Ծերենցի երկունք թ. դարու	1 ր.— »
25	— Թէոդորոս Ռշտունի	1 ր.— »
26	— Թորոս Լեռնի (2-դ տպագրութիւն)	1 ր.— »
27	Թագուհեան փոր ձ լեզուագիտական հետազօտութիւն	50 կ.
28	Նազարեանց պօլուէմպերիալ—մանկական թատրոն	20 կ.
29	Ա.քիմեանց Նալա և Դամայէանտի	20 կ.
30	Ա. Մ. Ե. Պ. Դիւցազունք Հայկ, Արամ և Վահագն	30 կ.
31	Մանդինեանց Ազգային—ընտանեկան աշխարհ	25 կ.
32	— — — — — Դիւցազնական աշխարհ	30 կ.
33	— — — — — Նահապետական և հայրենի աշխարհ	65 կ.
34	Երզնկեանց դասագիրք Ձայնագրութեան	30 կ.
35	Տէր-Աբրամեանց Հ. պատմութիւն 24 պատկերով	1 ռ.
36	Ցնային բժշկական մարմնամարզութիւն	40 կ.

Վերոյիշեալ գրքերը տասնից աւելի առնողներին 20% զիջումն կը լինի գինը կանխիկ վճարողին:

1—20

ՎԱՐՇԱՎԱ. Իր յատկութիւններով մարմնի մասերի և մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրոգիստների մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս **Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ** դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Իլկտօրյանի փողոց № 35. Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ: պէտք է զգուշանալ խարդախութիւններից և պահանջել, որ իւրաքանչիւր արկղիկը ունենայ գործածութեան մեթոդիւը և ֆարիզի աշխարհանդէսի մեդալները.

Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

19—20 (1)

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի իմ թարգմանած՝ **„ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ ՎՐԱ ՀԻՄՆՈՒԱԾ“** հեղինակութիւն Ժ. Բամբօսնի: Ուստի գիմելով այն յարգելի բարեկամաց, որոնք բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, խնդարհաբար խնդրում եմ, որմինչև օդոստոսի վերջը բարեհաճին յանձնել ինձ բաժանորդաթերթը, որպէս զի կարողանամ աւարտել գրքիս տպագրութիւնը առաջիկայ սեպտեմբերին: Իմ հասցէն՝ Тифлисъ. Григорію Шахбудагянцу, учителю Армянской Нерсисянъ Духовной Семинаріи.

Գրիգոր Շահբուդաղեանց

ПРИСЯЖНЫЙ ПОВѢРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ
Переѣхалъ на Сололакскую улицу, въ домъ К. Меликова.

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ“ продаются слѣдующія нѣмецкія брошюры:

Die Oekonomische Lage der Armenier in der Türkei. von Dr. GRIGOR ARZRUNI. Übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.

Die Hungersnoth in Türkisch-Armenien von Dr. GRIGOR ARZRUNI. Übersetzt von A. Amirchanjanz. Preis 20 kop.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

Տեղափոխվեցաւ Գանձակայա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՕՑԻՅԻ փողոցը № 11. փօստատան հանրի քովը: Ընդունվում են ամեն լեզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա:

Հաւլաբարի Զորաբաշու ս. Գէորգ եկեղեցոյ ծխական դպրոցը սեպտեմբերի 1-ից բացվեցաւ, ընդունում են 7—10 տարեկան մանուկներ: Դպրոցը այժմ տեղափոխուած է Բէգլեարօվկայա փողոցի վրա պ. Բաղրամովի (այժմ Լաչինեանի) տանը № 15.

Գրիգոր Մատինեանց

1—5

Дозволено цензурою, Тифлисъ 31 Августа 1881 года.
Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.